

ՀԱԼԵՊ ՄՊԻՏԱԿ ՍԱԲԱՆԻ ՏԱԿ ...

Posted on December 11, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



ԼԵՆՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ, ՀԱՒԷԱ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013

Ձիւնառատ օրեր կ'ապրի Հալեալը: Շաբաթ մը առաջ՝ օդերեւութաբանական կայանները հաղորդէր Էին արդէն, որ ձիւնամրրիկն ու բուքը իրենց տիրապետութեան տակ պիտի առնեն

Միջերկրականի արեւելեան ափերը, այսինքն՝ Լիբանանը, Պաղեստինն ու Սուրիան: Այդպէս ալ եղաւ:

Երեքշաբթի երեկոյեան ժամերէն սկսեալ՝ առատ ձիւն սկսաւ տեղալ Հալեալի եւ շրջակայքին վրայ: Ամբողջ գիշերը, մինչեւ Չորեքշաբթի (այսօր) կէսօրէ վերջուան ժամերը՝ շարունակ եւ անդադար կը ձիւներ: Առաւօտուն, երբ արթնցանք, մեր վիրաւոր քաղաքը ծածկուեր էր սպիտակ սաւանով...: Մայրերուն, տանիքներուն կամ ինքնաշարժներուն վրայ կուտակուած ձիւնը անցեր էր 8 սնթմ.ը:

ԼԵՆՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ, ՀԱՒԷԱ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013

Ձիւնառատ օրեր կ'ապրի Հալեալը: Շաբաթ մը առաջ՝ օդերեւութաբանական կայանները հաղորդէր Էին արդէն, որ ձիւնամրրիկն ու բուքը իրենց տիրապետութեան տակ պիտի առնեն

Միջերկրականի արեւելեան ափերը, այսինքն՝ Լիբանանը, Պաղեստինն ու Սուրիան: Այդպէս ալ եղաւ:

Երեքշաբթի երեկոյեան ժամերէն սկսեալ՝ առատ ձիւն սկսաւ տեղալ Հալեալի եւ շրջակայքին վրայ: Ամբողջ գիշերը, մինչեւ Չորեքշաբթի (այսօր) կէսօրէ վերջուան ժամերը՝ շարունակ եւ անդադար կը ձիւներ: Առաւօտուն, երբ արթնցանք, մեր վիրաւոր քաղաքը ծածկուեր էր սպիտակ սաւանով...: Մայրերուն, տանիքներուն կամ ինքնաշարժներուն վրայ կուտակուած ձիւնը անցեր էր 8 սնթմ.ը:

Կ'ըսուի, թէ ձիւնը լաւատեսութիւն կը բերէ: Մեծ ու փոքր, ամէն ոք կ'ախորժի ձիւնէն, մանաւանդ Արեւելքի մեր երկիրներուն մէջ, ուր ձմեռները ընդհանրապէս կու գան-կ'անցնին առանց ձիւնի: Հալեալի այս տարուան ձիւնը արտասովոր էր սակայն: Լաւատեսութիւն պիտի ներարկէ՞ անիկա մեր խռովեալ հոգիներուն, թէ՞ ծանրօրէն պիտի գայ նստի մեր սրտին վրայ...:

ՁԻԲՆ բառը , -ըստ իմ բարի սովորութեան,- մտորումներու առաջնորդեց գիս: Մտքիս մէջ փորձեցի շարել այն բառերը, որոնք կազմուած են «ձիւն» արմատով.- ձիւնագնդակ խաղալ, ձիւնախառն անձրեւ, ձիւնապատ Մասիս, ձիւնապսակ (կամ ձիւնագագաթ) սարեր, ձիւնածաղիկ (կամ ձնածաղիկ):

Յետոյ յիշեցի «Ձիւնաթոյրը», որ մեր երեխաներուն շատ սիրելի հեքեաթ մըն է:

Ու վերջապէս՝ իմ մտքէն ոգեկոչեցի «Ազդակ»ի երկարամեայ աշխատակից ՁԻԲՆԱԿԱՆԸ, որուն բուն անունն էր Ճորճ Աբելեան...

Բայց մեզի՞ սուրիացիներու համար, գլխաւոր հարցումը (նաեւ մաղթանքը) հետեւեալն է.-

ՁԻԲՆՀԱԼ մը պիտի իրականանա՞յ այս քանդիչ պատերազմին երկու կողմերուն միջեւ...: Կ'աղօթենք:

ՈՉ ԵՄՍ Է ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ

Յապաղումով իմացանք, որ շուրջ երկու շաբաթ առաջ, Նոյեմբեր 27-ին, Պեյրոլթի մեջ իր մահկանացուն կնքած Է լիբանանահայ մամլոյ աշխարհի երիցագոյն դեմքերէն, երկարամեայ խմբագիր ու հրապարակագիր Ժիրայր Նայիրի: 84 տարեկան էր:

Բուն անունով՝ Ժիրայր Թօսունեան, հանգուցեալը կարկառուն ու յառաջապահ դեմքերէն մին էր Հնչակեան կուսակցութեան, ուր վարած էր պատասխանատու պաշտօններ: Իր անունը անքակտելիօրէն կապուած էր Նոյն կուսակցութեան պաշտօնաթերթ «Արարատ»ին, որուն խմբագրի պաշտօնը վարած էր տասնամեակներ շարունակ, իր առաջնորդող յօդուածներով վերագծելով կուսակցութեան գաղափարական ուղեգիծը ու ձեւաւորելով իրեն հաւատարիմ հանրային կարծիք մը:



90-ական թուականներու կեսերուն, Ժ. Նայիրի հրաժարած էր «Արարատ» օրաթերթէն ու յաջողած էր ձեռք բերել Ա. Ծառուկեանի երբեմնի «Նայիրի» շաբաթաթերթին արտօնագիրը՝ սկսելով գայն վերահրատարակել նոր տարագով ու պարունակութեամբ, իբրեւ իր սեփական թերթը: Այս նախաձեռնութեան մէջ իրեն թել-թիկունք կանգնած էր Չուիցերիայէն բարերար Յովի. Չիլինկիրեան: Այսպէս ալ, նոր «Նայիրի»ն սկսեր էր լոյս տեսնել երկշաբաթեայ դրութեամբ, ունենալով աշխատակիցներու եւ գործակիցներու ուրոյն խմբակ մը:

Նոր «Նայիրի»ն, սակայն, բնաւ չէր յիշեցներ հինը, այն՝ զոր Ծառուկեան հրատարակեց երեսուն տարի շարունակ: Ժ. Նայիրին, իր աշխարհայեացքով, գաղափարական համոզումներով, ճաշակով թէ կապերով՝ ուրիշ խմոր ունէր: Իր մօտ շեշտուած էին մարքսիստ հակումը, ծայրայեղ ռուսասիրութիւնը, «հակա-արեւմուտք» կեցուածքը...:

Ժ. Նայիրի, այնուհանդերձ, հին սերունդի երեւելի խմբագիրներէն մին կը մնար: Ունէր հրատարակուած գիրքեր ալ: Իր մահով, ուշագրաւ էջ մը կը փակուի լիբանանահայ մամուլի պատմութեան մէջ:

